

Հայաստանի հյուսիսային սահմանակետերի արդիականացման ծրագիր

Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	43826
Բիզնես ոլորտ	Տրանսպորտ
Պետական/մասնավոր	Պետական
Բնապահպանական դաս	Բ
Խորհրդի նիստի ամսաթիվը	2012թ. Նոյեմբերի 13
Կարգավիճակ	Վարկը մարման փուլում է
Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը.	2012թ. Մարտի 22

Ծրագրի նկարագիրը

ՎԶԵԲ-ը աջակցում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանի երկայնքով ընկած սահմանային հսկողության երեք անցակետերի (ՄՀԱ) արդիականացման և նորացման ծրագրի ֆինանսավորմանը: 2012թ.-ի նոյեմբերի 23-ին ՎԶԵԲ-ի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 10.3 մլն եվրո արժողությամբ վարկային պայմանագիր, որի նպատակը Բագրատաշենի կամրջի կառուցման ֆինանսավորումն է: Սադախլո-Բագրատաշեն կամրջի կառուցումը համաֆինանսավորելու Վրաստանի կառավարության կողմից ներկայացված հայցի հիման վրա՝ 2014թ.-ի դեկտեմբերի 24-ին Վրաստանի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրվել է «Վրաստանի և Հայաստանի Հանրապետության Սադախլո-Բագրատաշեն պետական սահմանի սահմանային անցակետում՝ Դեբետ գետի վրա նոր կամրջի կառուցման մասին համաձայնագիրը»: Արդյունքում, ՎԶԵԲ-ը քննում է Սադախլո-Բագրատաշեն կամրջի կառուցման համաֆինանսավորման նպատակով Վրաստանին սուվերեն վարկ տրամադրելու հարցը:

Ծրագրի ամփոփ փաստաթուղթը առաջին անգամ հրապարակվել է 2012թ.-ի մարտի 22-ին:

Ծրագրի նպատակները

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված վարկի միջոցներով կֆինանսավորվի Վրաստանի և Հայաստանի Հանրապետության Սադախլո-Բագրատաշեն սահմանային անցակետում նոր կամրջի կառուցումը, ինչպես նաև վերահսկման աշխատանքները:

Բագրատաշենում, Բավրայում և Գոգավանում գտնվող սահմանային անցակետերը ենթակառուցվածքային հիմնական առաջնահերթություններն են համաձայն Հայաստանի սահմանային միասնական կառավարման պլանի: Սահմանային անցակետերում արդյունավետ կառույցների առկայությունը Վրաստանի կառավարության համար ևս առաջնահերթություն է: Տրանսպորտի առկա ենթակառուցվածքի ներկայիս վատ որակը, ինչպես նաև սահմաններում գտնվող կառույցները առաջացնում են զգալի խոչընդոտներ տարածաշրջանային երթևեկության հոսքի առումով:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Բավարար

Սահմանային անցակետեր տանող ենթակառուցվածքների և սահմանային անցակետերի ենթակառուցվածքների թարմացումը կստեղծի ավելի արդյունավետ գործող տնտեսական տրանսպորտային միջանցք, որը կնպաստի տարածաշրջանի առևտրին և ուղևորների հոսքին՝ ամրապնդելով միջազգային համագործակցությունը հարավկովկասյան երկրների միջև: Ծրագիրը նաև գործառնությունների համար պայմաններ կստեղծի արդիականացված սահմանային անցակետերում, ինչի շնորհիվ գործառնական բարդությունները չեն խոչընդոտի տնտեսական շահութաբերության ներուժի իրագործմանը:

Հաճախորդի մասին տեղեկություն

Հայաստանի Հանրապետություն

Վարկառուները կլինեն.

- Հայաստանի Հանրապետությունը. Իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի նախարարություն
- Վրաստան. Իրականացնող՝ Վրաստանի Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՎԶԵԲ-ի ֆինանսավորման ամփոփագիր

10,300,000.00 եվրո

10.3 մլն եվրո սուվերեն վարկ Հայաստանի Հանրապետությանը (ենթակա է նվազեցման)

Մինչև 6 մլն եվրո սուվերեն վարկ Վրաստանին

Հայաստանի Հանրապետության մասով արդիականացման ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) վարկով և ԵՄ-ից ստացված դրամաշնորհային ֆինանսավորմամբ, ԵՄ Հարևանության Ներդրումային Ծրագրի (ՀՆԾ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջոցներով:

Ծրագրի ընդհանուր գումարը

64,100,000.00 մլն եվրո

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփագիր

ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության համաձայն (ԲՄՔ) (2014)՝ Ծրագիրը դասակարգվել է Բ խմբում: Բազրատաշենում կամրջի կառուցման հետ կապված բնապահպանական և սոցիալական հավանական ազդեցությունները հնարավոր է հեշտությամբ գնահատել և պատշաճ կերպով մեղմացնել դրանց ազդեցությունը:

2012թ. -ին ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը նախաձեռնել է Ծրագրի Սոցիալական և բնապահպանական ազդեցության նախնական գնահատումը (ՄԲԱՆԳ), որով ապահովվում է սահմանային հսկողության երեք անցակետերի զարգացման և գործունեության հետ կապված հնարավոր ազդեցությունների բարձր մակարդակի գնահատում: Հավելյալ գնահատում է իրականացվել Բանկի տեխնիկական փորձագետի կողմից, ով այցելել է տեղանք և հանդիպել է մի շարք շահագրգիռ կողմերի հետ՝ այդ թվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և տեղական իշխանությունների հետ: Համաձայն համապատասխան զեկույցների՝ կամրջի կառուցումը հնարավոր է հանգեցնի մի շարք բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, թեև հնարավոր է դրանք արդյունավետորեն մեղմացնել: Կամրջի նախագծման և դրա կառուցման հետ կապված հիմնական ռիսկերը առնչվում են աշխատողների աշխատանքային պայմաններին, նրանց առողջության և անվտանգության հարցերին, բուսականության վերացման, առկա կամրջի քանդման և նորի կառուցման արդյունքում առաջացող աղմուկի, տրանսպորտի և փոշու հետ կապված հարցերին: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողն արդեն ձեռք է բերվել. սա չի հանգեցրել հարկադիր վերաբնակեցումների, թեև մի քանի փոքր

բիզնեսներ ունեցող սեփականատերեր ստացել են իրենց բիզնեսի կորստի դիմաց փոխհատուցում: Մինչ օրս տրամադրված տեղեկության համաձայն սույն սեփականատերերին տրվել է համարժեք փոխհատուցում:

Կամրջի կառուցման հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերի բավարար կառավարումն ապահովելու նպատակով մշակվել է Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլան (ԲՍԳՊ)՝ կազմակերպելու ծրագիրն այն կերպ, որպեսզի նա համապատասխանի Բանկի՝ Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականությանը և դրա հետ կապված՝ Կատարողականի Նախորոշված Պահանջներին: ԲՍԳՊ-ի հիմնական նպատակները հետևյալն են. կամրջի կառուցման առանձնահատկությունները հաշվի առնող բնապահպանական և սոցիալական վերլուծություն, Շահագգիտ Կողմերի Ներգրավման Պլան (ՇՆՊ), Առողջապահական և Անվտագության և Մարդկային Ռեսուրսների Պլանի մշակում, Թափոնների Կառավարման Պլանի իրականացում, որը ներառում է քանդման թափոնների համապատասխան իրացում: Բանկը անցկացնելու է Ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականի, ինչպես նաև ԲՍԳՊ-ի իրականացման մոնիթորինգ՝ տարեկան հաշվետվությունների և, ըստ անհրաժեշտության, մոնիթորինգային այցելությունների միջոցով:

Տեխնիկական համագործակցություն

Առկա չէ:

Կոնտակտային տվյալներ

Վարդան Կարապետյան

+374 12 20 10 10

<http://northsouth.am/en>

Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի Ներդրումային Ծրագիր ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Տիգրան Մեծի 4

Գործարար համագործակցության հնարավորություններ

Գործարար համագործակցության կամ գնումների հետ կապված հարցերի դեպքում կապվեք հաճախորդի հետ:

Պետական ոլորտին առնչվող ծրագրերի հետ կապված հարցերի դեպքում այցելեք [EBRD Procurement](#), հեռ.՝ Tel: +44 20 7338 6794, էլ.փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎԶԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն

Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎԶԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելեք <http://www.ebrd.com/about/policies/pip/index.htm>

Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմ (ԾԲՄ)

ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմը (ԾԲՄ), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԾԲՄ-ին վերաբերող ընթացակարգի օրենքներին կարող եք ծանոթանալ www.ebrd.com/downloads/integrity/pcmrules.pdf.

Կարող եք կապվել ԾԲՄ-ի գործակալի (pcm@ebrd.com) հետ, եթե վստահ չեք ձեր բողոքի համապատասխանելիության հարցում: